ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/261

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/5» ծածկագրով բաց մրցույթ, դերձակի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԲՄԾՁԲ-7/5-5»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16733-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.11.2020թ. թիվ ՊՆ//3499-2020 գրության հիման վրա, 06.11.2020թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.11.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձը 06.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/261 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.11.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.11.2020թ. թիվ ՊՆ//3499-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքված N ԲՄԾՁԲ-7/5-5 պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը 2020թ. հոկտեմբերի 29-ին միակողմանի մասնակի լուծել է N ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրին կից 04.06.2020թ. կնքված N 3 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 29.10.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Պահապան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16733-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 26.11.2020թ.-ին հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 18.11.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԼՕ-2020/261 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գանում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով.

Նախ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտը լուծել է ոչ թէ ամբողջ պայմանագիրը, այլ պայմանագրի մաս կազմող համաձայանգիրը, այն էլ մասնակի:

ՀՀ Պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքվել է N ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրիրը: Պայմանագրի 2018 և 2019 թթ. համաձայնագրերով նախատեսված պայմանագրային պարտավորությունները հայցվորը ըստ ժամանակացույցի պատշաճ կերպով և ժամկետներում կատարել է: 04.06.2020թ. կնքվել է հիշյալ պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող N 3 համաձայնագիրը: Ըստ համաձայնագրի գնման ժամանակացույցի, «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է ՊՆ-ին մատակարարելու դերձակի ծառայություններ կարելով և ՊՆ-ին մատակարարելով 20 000 լրակազմ Կոստյում բամբակյա կեպիով (որից 2000 լրակազմը 2020թ. 2-րդ եռամսյակում, 9000-ական լրակազմերը 3-րդ և 4-րդ եռամսյակներում) և 5000 լրակազմ Կոստյում ձմեռային դաշտային (որից 3500 լրակազմը 2020թ. 3-րդ եռամսյակում, 1500 լրակազմը 4-րդ եռամսյակում):

Որպես համաձայնագրով նախատեսված պարտավորությունների ապահովում «Պահապան» ՍՊԸ-ն «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջոցով ՊՆ-ին է ներկայացրել 14 740 000 դրամի բանկային երաշխիք:

ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից համաձայնագիրը 29.10.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է: Լուծման հիմք է հանդիսացել համաձայնագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված 5000

լրակազմ դերձակի ծառայությունները (Կոստյում ձմեռային դաշտային) մատակակարված չլինելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

«Պահապան» ՍՊԸ-ի և ՊՆ-ի միջև 02.04.2018թ. կնքված ԲՄԾՁԲ-7/5-5 պայմանագրի 6-րդ կետը սահմանում է «Սույն պայմանգրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարաավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:….»:

Համաձայնագրով նախատեսված 5000 լրակազմ Ձմեռային դաշտային կոստյումները չմատակարարելեւ հարցում բացակայում է Հայցվորի մեղքը, քանի որ Համաձայնագիրը կնքվել է 2020թ. հունիսի 4-ին, այսինքն այն ժամանակ, երբ ՀՀ-ում և ամբողջ աշխարհում լայնորեն տարածվել էր կորոնավիրուսի համաճարակը, իսկ հոկտեմբեր անսվա ամբողջ ընթացքում նաև պատերազմական իրավիճակը, որոնք հանդիսանում են անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր):

ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում Արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմանը հաջորդած ՀՀ Պարետի «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» որոշումների հիման վրա «Պահապան» ՍՊԸ-ն 2020թ. մարտի 16-ից մինչև մայիսի 14-ը ամբողջովին դադարեցրել է գործունեությունը:

Մայիսի 14-ին ընկերությունը վերսկսել է գործունեությունը, սակայն մինչև օրս գործում է 20-25% հզորությամբ, կապված աշխատակիցների կորոնավիրուսով հիվանդանալու դեպքերի հետ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1 աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան, Բելոռուս, Թուրքիա և այլն): Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները և հոկտեմբեր ամսին է միայն մեզ հաջողվել մեծ դժվարություններով ներկրել արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ նյութերն ու աքսեսուարները (գործվածքներ, ասպառներ, շղթաներ, սինտիպոն, կաշվե տարբեր արտադրատեսակներ և այլն):

Այդ դժվարություններին ավելացավ նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը Հայաստանի նկատմամբ: Ամբողջ հոկտեմբեր ամսվա ընթացքում մեր ընկերությունը ելնելով պատերազմական իրավիճակից, կատարել է միմիայն Պաշտպանության նախարարության պատվերները:

Նշված անհաղթահարելի ուժի պատճառով խախտվել են ինչպես հիշյալ պայմանագրերով, այնպես էլ այլ գերատեսչությունների հետ կնքված տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված մատակարարման ժամկետները:

Վերը հիշատակված հիմնավորումներով «Պահապան» ՍՊԸ-ն 03.11.2020թ. Հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, խնդրելով անվավեր ճանաչելու ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից հիշյալ թիվ 3 Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը: Հայցադիմումի վերաբերյալ դատարանը դեռևս վերջնական դատական ակտ չի կայացրել:»:

24.11.2020թ.-ին ներկայացված մեկ այլ գրությամբ, Մասնակիցը հավելել է հետևյալը.

«Ի լրումն Թիվ ՍՑ-ԼՕ-2020/261 ընթացակարգի վերաբերյալ մեր 18.11.2020թ. դիրքորոշման ուղարկում ենք «Պահապան» ՍՊԸ-ի մի քանի աշխատակիցների կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ բժշկական փաստաթղթերը

1. Կարապետյան Գայանե-դերձակ

2. Հարությունյան Ամալիա-ղերձակ

3. Կոստանդյան Գագիկ-արտադրության պետ

4. Գեղամյան Արթուր-ձևարար

5. Բաղալյան Արա-դերձակ

6. Մարտիրոսյան Դոնարա -արտաղրամասի պետ

Սրանք այն աշխատողներն են, որոնք պահպանել և ներկայացրել են բժշկական փաստաթղթերը: Ավելի վաղ հիվանդացած աշխատակիցները ուղղակի չեն պահպանել բժշկական փաստաթղթերը: Բազմաթիվ աշխատակիցներ ինքնամեկուսացել և բուժում են ստացել տնային պայմաններում: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ նաև, որ որևէ աշխատակցի հիվանդանալու դեպքում առնվազն 20 օրով ինքնամեկուսացվել են արտադրամասերի բոլոր աշխատողները որպես հնարավոր կոնտակտավորներ, որպեսզի կորոնավարակը ավելի լայն տարածում չստանա: Խնդրում ենք նշված հանգամանքը ի նկատի ունենալ ընթացակարգի քննության ընթացքում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/261 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ

նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

iv. Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի 2020 թվականին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, սակայն ոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 29.10.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/5316 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» գնման պայմանագրի թիվ 3 համաձայնագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լուծվել է՝ այն հանգամանքի հաշվառմամբ, որ կնքված Համաձայնագրի շրջանակներում մասնակիցը 2020թ.-ի 3-րդ եռամսյակում պետք է մատուցեր 3500 լ-կ դերձակի ծառայություններ /Կոստյում՝ ձմեռային դաշտային/, սակայն մինչ օրս չի մատուցել, իսկ 4-րդ եռամսյակում՝ 1500 լ-կ դերձակի ծառայություններ /Կոստյում՝ ձմեռային դաշտային/ և հիմք ընդունելով «ԲՄԾՁԲ-7/5-5» գնման պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16733-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ

իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-ները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն

իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական ոնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունը

մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 6 կետի համաձայն՝ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած: Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը, որի թիվ 1 հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020 թվականին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, սակայն ոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 29.10.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/5316 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» գնման պայմանագրի թիվ 3 համաձայնագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լուծվել է՝ այն հանգամանքի հաշվառմամբ, որ կնքված Համաձայնագրի շրջանակներում մասնակիցը 2020թ.-ի 3-րդ եռամսյակում պետք է մատուցեր 3500 լ-կ դերձակի ծառայություններ /Կոստյում՝ ձմեռային դաշտային/, սակայն մինչ օրս չի մատուցել, իսկ 4-րդ եռամսյակում՝ 1500 լ-կ դերձակի ծառայություններ /Կոստյում՝ ձմեռային դաշտային/ և հիմք ընդունելով «ԲՄԾՁԲ-7/5-5» գնման պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին և դրան կցված բուժ հաստատությունների կողմից տրված տեղեկություններին՝ Բողոքներ քննող անձն

արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին Համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ գնման-ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցումն եղել է անհնար՝ պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, և երկրում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Բողոքներ քննող անձը վերոնշյալները քննարկելով նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը սահմանվում է պետության ամբողջ տարածքում կամ առանձին հատվածներում ներքին և արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև երկրի սահմանադրական ու հասարակական կարգը պահպանելու նպատակով (հոդված 1): Արտակարգ դրության ռեժիմն ենթադրում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ազատությունների և իրավունքների

սահմանափակում, ինչպես նաև նրանց համար լրացուցիչ պարտականությունների սահմանում (հոդված 4):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության և կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի հանգամանքներով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Բացի այդ, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 համաձայնագիրը հավելված 1-ով սահմանված գնման-ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվեր 2020 թվականին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը, սակայն Պատվիրատուն 29.10.2020թ.-ին թիվ ՆՏԱ/5316 ծանուցմամբ կողմերի միջև կնքված թիվ 3 համաձայնագիրը լուծել է՝ Մասնակցի կողմից 3-րդ և 4-րդ եռամսյակներում ծառայության մատուցման ժամկետները խախտելու հիմքով: Տվյալ պարագայում, հարկ է նկատել, որ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի հիմքով Պատվիրատուն իրավունք ուներ պայմանագիրը լուծեր, երբ Մասնակիցը, էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այլ կերպ ասած՝ Պատվիրատուն 29.10.2020թ.-ին լուծել է թիվ 3 համաձայնագիրը՝ ծառայության մատուցման ժամկետները խախտելու հիմքով, այն դեպքում, երբ նույն համաձայնագրով որպես ծառայությունների մատուցման ժամկետ էր սահմանվել 2020 թվականին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակները, բայց ոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից չի խախտվել ծառայության մատուցման ժամկետը, քանի որ խախտումը էական է համարվում այն դեպքում, երբ Մասնակցի կողմից ծառայությունը մատուցված չլիներ 2020 թվականին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին, բայց ոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը, որպիսի պայմաններում առկա չէ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների էական խախտում:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16733-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/261 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**